Լ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Արփիար Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1991, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 419 էջ։

Աշխատությունն ընդգրկում է Արփիարյանի կենսագրությունը, հրապարակախոսությունը, գեղարվեստական ստեղծագործությունն ու գեղագիտական-գրականադատական հայացքների ամբողջությունը։ Առաջին անգամ համակողմանիորեն վերհանվում է հայ մշակույթի ականավոր դեմքի մտավոր ողջ գործունեությունը։ Հեղինակը Արփիարյանի կենսագրության և ստեղծագործության ներքին կապը ձգտել է բացահայտել բնութագրական իրադրության մեջ և գա էլ, ըստ իս, դարձել է նրա աշխատանքի հաջողության գրավականներից մեկը։

Աշխատության երեք գլուխներից առաջինը ներառում է Արփիարյանի հրապարակախոսական գործունեությունը՝ սկսած «Մշակին» աշխատակցելուց մինչև «Արևելք», և այնուհետև «Շիրակ» ու «Լուսաբեր» պարբերականները՝ մինչև նրա կյանքի ողբերգական ավարտը։ Իրավացի է հեղինակը, երբ Արփիարյանի հրապարակախոսական գործունեության հասարակական արժեքը պայմանավորում է համազգային հիմնախնդիրների քննարկումով, Հայկական հարցի լուծման համազգային ոգորումներով և «Մշակի» գաղափարական ազդեցությամբ։ Արփիարյանն այդ ազդեցությունը հաղթահարում է հրապարակախոսական ուրույն ընդհանրացումներով, զուտ արևմտահայ կյանքին հասցեագրված գործնականությամբ, որ նրա քննակցություններին տալիս էր քաղաքացիական գործուն դիրքորոշում։ Վերջինս բնութագրվում էր արևմտահայ կյանքի ներքին արատների համարձակ վերհանմամբ, ազատագրական տրամադրությունների նուրբ արձագանգումով և ժողովրդի պայքարի ոգին զորացնելու առողջ մտայնությամբ։ Հեղինակը համոզիչ լուսաբանումներով ներկայացնում է Արփիարյանի հրապարակախոսության առաջին տասնամյակի ուղղվածությունը՝ Կ. Պոլսի Ազգային ժողովի քննադատությունը, ընդդիմությունը համիդյան բռնակալական կարգերին, արևմտահայ և արևելահայ հատվածների մերձեցման ու ազգային-քաղաքական ու մշակութային միասնության ձգտումը և այլն։ Ժողովրդավար հրապարակախոսը այս գաղափարներին էր ծառայեցնում իր քննակցությունների բուն առարկան՝ կրթական գործը, Ազգային վարչության գործունեության համապատկերը, եկեղեցին, մամուլը։ Հեղինակն այս ամենը ցուցադրում է ոչ միայն նյութի քննարկումով, այլև միշտ պահպանելով չափի զգացումը, որ նպաստում է իր առաջադրած հարցերի բավարար պարզաբանմանը։ Ընդ որում, Լ. Մուրադյանը Արփիարյանի հրապարակախոսության հասարակական ներգործությունը իրավացիորեն տեսնում է նրա քննադատական կեցվածքի մեջ ընդդեմ այն ամենի, ինչ ազգադավ էր, հնազանդ և անմռունչ՝ իրեն սպառած ավանդականի և բռնակալության առջև։

Եթե 1880-ականի սկզբին Արփիարյանի հրապարակախոսությունը նշանավորում էր արևմտահայ ժողովրդավարական նոր հրապարակագրության հայտնությունը, ապա նույն ժամանակների նրա գրականադատական հոդվածները ի հայտ են բերում իրապաշտական շարժման գեղագիտական հիմնավորման առաջին փորձերը։ Հեղինակը հանգում է այն ճիշտ հետևությանը, որ «Մշակի» արևմտահայ աշխատակիցը հետամտում էր «գեղարվեստական մտքի ծրագրային զարգացման» անհրաժեշտությանը։

Արփիարյանի հրապարակախոսական գործունեության և, առհասարակ, 1880-ական թթ. արևմտահայ լրագրության պատմության բացահայտման տեսակետից շատ կարևոր է աշխատության՝ «Արևելքի» շրջանին նվիրված հատվածը։ Դա փաստորեն արևմտահայ կյանքի նոր իրադրության շրջանն էր, հայության բնաջնջմանը հետամուտ համիդյան քաղաքականության ծավալման սկիզբը։ Լ. Մուրադյանը խորամուխ է եղել պարադոքսալ այն երևույթի մեջ, որ բռնապետության ամենօրյա հարվածների թիրախ դարձած հայ մամուլը, այսուհանդերձ, «ստանձնում է հասարակական առաջնեթացի ուղեցույցի գերը» (էջ 70)։ Այդ գերը, առաջիններից մեկը լինելով, ստանձնել էր «Արևելքը»՝ նոր լրագրության առաջնեկը 1880-ականին։ Եվ՝ ձևի (ժանրային) և բովանդակության (արևմտահայության կացության պատկերը գավառներում և Կ. Պոլսում) իմաստով «Արևելքի» դիրքորոշումը պայմանավորված էր արևմտահայ կյանքի ներքին տրամաբանությամբ, ընդնշմարվող թշնամական պետական քաղաքականության բերած տագնապներով, որ մտրակում էր հայ ամենատարբեր հասարակական խավերի գի-

տակցությունը։ Պետք էր ըստ հնարավորին համախմբվել՝ հեռուներում ուրվագծվող աղետին, թեկուզ բնազդորեն՝ ազգովին հակադրվելու համար։ Սրանով է բացատրվում, ըստ իս, «Արևելքի» վարչական խորհրդի երևելիների և բուն ժողովրդավար խմբագրական մարմնի շատ ուշագրավ համագործակցությունը այդ թերթում։ Կարծում ենք, ինչ-որ չափով արժեր ուշադրություն դարձնել այդ համագործակցության ներքո եղած հակասություններին վրա, որ անդիտացվել է խնդրո առարկա աշխատության մեջ։ Չմոռանանք, որ «Արևելքի» խմբագրական մարմնի տեսակետը արտահայտվում էր հիմնականում թերթի երրորդ էջում, ի հակակշիռ նրա առաջին և երկրորդ էջերի, որտեղ տնօրինում էր չափավոր վարչությունը։ «Արևելքը» աշխատության մեջ փաստորեն նույնացվում է Արփիարյանի հրապարակախոսության հասարակական դիրքորոշման հետ, որ հերքվում է ոչ միայն թերթի նյութերով, այլև Ա. Արփիարյանի և Գր. Չոհրապի բազմաթիվ վկայություններով (տե՛ս Նոր կյանք, 1899, № 19, էջ 298, Հայրենիք, 1893, № 356, Ա. Ալպոյաճյան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Չոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 58 և այլն)։ Պետք է ավելացնել, սակայն, որ նշված համահարթեցումը չի հակասում Արփիարյան-հրապարակախոսի ըմբռնումների ճշմարտացի բացահայտմանը «Արևելքի» շրջանում։

Աշխատության մեջ հիմնավորված ուշադրության է արժանացել Արփիարյանի դերը՝ արևվելահայերի հետ հասարակական ու գրական կապերի խորացման գործում։ Այս իրողության հետ սերտորեն կապվում է ռուս գրականության ու մշակույթի նկատմամբ արևմտահայության աննախադեպ հետաքրքրության բացահայտումը։ Հեղինակը համոզում է, որ այս հանգամանքը Ռուսաստանի հետ կապվող քաղաքական ծրագրերի դրսևորում էր։ Հիրավի, 1880-ականի արևմտահայ ժողովրդավարները (իհարկե, ոչ առանց բացառությունների) կողմնորոշվում էին դեպի Ռուսաստան և ռուս առաջավոր հասարակական ու քաղաքական միտքը։ Այս գործիչները այդպիսի կողմնորոշմանը հաստատուն էին մնում՝ քամահրելով քաղաքական ամենազայթակղիչ փաստերը, որոնք դրսևորվում էին Հայկական հարցում ցարական կառավարության թրքահաճո կեցվածքով։ Անշուշտ, այս հիմնահարցը պահանջում է արդիական գիտական լուծում, բայց անվիճելի է, որ արևմտահայ ժողովրդավարներն արտահայտում էին ազգի զոյատևման տրամադրությունները։

Ուշագրավ են Լ. Մուրադյանի համադրումները «Արևելքի», «Մասիսի» և, մյուս կողմից՝ «Մշակի» միջև, որոնք ամոր կռվան են դառնում ժամանակի հայ հասարակական մտքի միասնական բնույթն ու նկարագիրը վերստին ապացուցելու համար։ Թարմությամբ է այլի ընկնում Արփիարյանի հրապարակախոսական գործունեության՝ «Մասիսի» շրջանի բացահայտումը։ Առօրյա կյանքի սթափ քննությունը «Մասիսի» էջերում զուգադրվում էր գեղարվեստական դրականության բարոյաէթիկական ամրագրումներով։ Առհասարակ, Արփիարյանի խմբագրած «Մասիսին» տրված բնութագիրը շատ կողմերով լրացնում է մեր պատկերացումները ոչ միայն 1880-ականի վերջերի Արփիարյանի հրապարակախոսության ընթացքի, այլև բուն «Մասիսի» մտավոր փայլատակումների մասին։ Նույնը առանց վարանումների կարելի է ասել Արփիարյանի գործունեության հաջորդ «Հայրենիքի», շրջանի վերաբերյալ։ Ցույց է տրվում այդ թերթի բացառիկ դերը արևմտահայ առաջադեմ մտավորականության համախմբման, նրա գործունեությունը կազմակերպված հունի մեջ դնելու գործում։ Հեղինակը այս վերջին կողմին է առնչում «ամենուի հասարակական օգտակարության» գաղափարը։ Այդ գաղափարը տարերայնորեն սկիզբ էր առել դեռևս «Աղդարարի» ժամանակից (1794), բայց, ըստ էության, այն հարյուրամյա ընթացք էր ապրելու, որպեսզի ազատագրվեր անհատապաշտության բնազդական մղումներից և դառնար գիտակցված անհրաժեշտություն։ Դրանով էր առաջնորդվում Հ. Շահնազարի և Ա. Արփիարյանի «Հայրենիքը», որն արևմտահայ ժողովրդավարական մտքի լուրջ ամբիոններից մեկն էր անցյալ դարավերջին։ Աշխատության մեջ այս փաստը հիմնավորվում է «Հայրենիքի» հրապարակախոսական համարձակ առաջադրումով ու լայն շառավիղներով, հասարակական ներգործության չափով ու սկզբունքայնությամբ։

Աշխատության երկրորդ գլխում հետազոտվում է Արփիարյանի գեղարվեստական ստեղծագործությունը՝ «Կյանքի պատկերների» գեղարվեստական կառույցից մինչև արձակի փոքր ձևերը։ 1880-ական թթ. գրական-իրապաշտական շարժումը, որ ներկայացվում է էական կողմերով, ծառայում է իբրև հենք՝ Արփիարյանի տեղն ու դերը այդ շարժման մեջ ցույց տալու համար։ Արփիարյանի արձակի սոցիալական նկարագիրը հեղինակը բնորոշում է նրա գեղագիտական սկզբունքներով և ուղղվածությամբ։ Արփիարյանի իրապաշտության առանձնահատկությունները ցույց են տրվում «Կյանքի պատկերներ» շարքի գործերի վերլուծությամբ։ Հեղինակը նուրբ դիտարկումներով բացահայտում է Արփիարյանի պատմվածքների կենսական հզոր

լիցքը, որը մի կողմից ստեղծում է «հրապարակախոսական արձակի» պատրանք, բայց և մյուս կողմից՝ հասցնում է հասարակական բնույթ ստացած հիմնահարցի գեղարվեստական հիմնավորման։ Այստեղ պետք է նշել, որ, բանավիճելով Աքփիարյանի ժամանակակից և հետագայի քննադատների հետ, հեղինակը երբեմն խուսափում է սրոշակի հակադրություններից։ Թվում է, լ. Մուրադյանը առավել հստակ պետք է սահմանազատվեր 1905 թ. ռուսական հեղափոխության՝ Արփիարյանի ստեղծագործության վրա թողած ազդեցությունը հավաստող տեսակետներից։ Սոցիալական բողոքի թեման, որ առկա է Արփիարյանի (և ոչ միայն Արփիարյանի) երկերում, դեռևս չի նշանակում, որ նա նկատի է ունեցել սոցիալական հեղափոխությունը։ Սոցիալիստական գաղափարների հանդեպ համակրանքը ամենևին էլ չի նույնանում սոցիալական պայթյունները անխուսափելիորեն ընդունելու հետ։ Եվ դարձյալ, ժամանակավրեպ պետք է համարել Ալ. Մյասնիկյանին վկայակոչելը Արփիարյանի գնահատման հարցում։ Նշված դիտողությունը, սակայն, գրեթե կորցնում է իր ուժը, եթե նկատի ունենանք, որ լ. Մուրադյանը ըստ ամենայնի հերքում է այն գնահատականները, որտեղ անտեսվում է ժամանակի հայ մարդու մտածողությունը՝ այն փոխարինելով հեղափոխական մերկապարանոց առաջադիմներով։ Այս առիթով ասենք, որ «կարմիր ժամուց» վիպակը այս աշխատության մեջ, առաջին անգամ լինելով տասնամյակներ ի վեր, ստացել է գեղագիտական խոր իմաստավորում։ Արփիարյանի ստեղծագործական անհատականության այդպիսի ըմբռնման արդյունք է լ. Մուրադյանի այն կարծիքը, որ իրական դեպքերն ու պատմական իրադարձությունները միշտվայրի բաղադրամաս դարձնելը առավել համոզիչ է դարձրել վիպակի ստեղծագործական ճշմարտացիությունը։ Չի կարելի չհամաձայնել լ. Մուրադյանի հետ, երբ նա հերքում է Հայրապետ էֆենդու ազատագրական հակումները տիպական չհամարող տեսակետը (որը հենվում է ազատագրական պայքարը միայն սոցիալապես շահագրգիռներին վերագրելու ուղղափառ հեղափոխական սխեմայի վրա)։ Բայց և դժվար է համաձայնել հեղինակի հետ, երբ նա իր հերքումը բացատրում է «ժամանակի քաղաքական էքստրեմալ իրադրությամբ, որը կարող էր նպատակաուղղել հերոսներին բացառիկ արարքներին» (էջ 291)։ Հայրապետ էֆենդու մեջ կատարված բեկումը բացառիկ հանգամանքների արդյունք չէ։ «Կարմիր ժամուցը» գեղարվեստորեն արտացոլում է հայ հասարակության մեջ ազատագրական պայքարի վերաբերյալ հակադիր կամ ուրույն տեսակետները։ Այդ տեսակետների իրապաշտական վերլուծությունը գրողի կողմից, գրանց ոչ բևեռայնությունը Արփիարյանը դիտում է որպես հասարակական տարբեր խավերի մեջ գիտակցումն այն բանի, որ օսմանյան բռնապետությունը, ի վերջո, ուղղված է ողջ ազգի գոյության դեմ։ Որոշ վերապահումներով, սակայն, պետք է ասել, որ հայ վերնախավի համար արտաքս կարգի կեցվածք չէր կարող լինել հակումը դեպի ազատագրական պայքարը (տնտեսական շահերի գործոնին կարելի է մոտենալ մի այլ անկյունից՝ հիշենք, Քեկուզ, 1890-ականից Համիդի, հետագայում՝ երիտթուրքերի, բացահայտ թալանչիական միջոցառումները արևմտահայ բուրժուազիայի դեմ՝ նրան թուրքական շուկայից արտաքսելու համար)։

Վերջին՝ երրորդ գլխում լ. Մուրադյանը արժեքավորում է Արփիարյան-գրական քննադատի և գրականության պատմաբանի դերը հայ մտավոր մշակույթի պատմության մեջ։ Արփիարյանի հայացքներն այս բնագավառում դիտարկվում են հիմնավորապես՝ իբրև «80-ականների իրապաշտ սերնդի գեղագիտական հայեցություն»։ Հետազոտողը հիմնահարցը քննում է իր ամբողջության մեջ՝ բնութագրելով առհասարակ Արփիարյանի քննադատական հայացքներին նվիրված ուսումնասիրությունները։ Ոչ պակաս կարևոր են Արփիարյանի քննադատական սկզբունքների գիտական բնույթը, նրա իրապաշտական գեղագիտական չափանիշների բացահայտումը։ Գրականության օգտապաշտության սկզբունքը Արփիարյանը առնչում էր ժողովրդական գրականության բովանդակության, «գավառի գրականությունն» հասկացության հետ։ Վերջինը արևմտահայ գրականությանը ներարկելու էր ազգային կենսական հզոր լիցք, այդ գրականությունը ծառայեցնելու էր Արևմտահայաստանի իրական առաջնթացի պահանջներին։

Արփիարյանի գեղագիտական հայացքները լ. Մուրադյանը քննում է կոնցեպտուալ կոբրվածքով՝ գրականության հասարակական նշանակությունը, գրականության հասարակական օգտակարությունը, գրականությունը իբրև ժողովրդի հոգեբանության անդրադարձ և, վերջապես, գրականությունն իբրև հասարակական վերափոխումների ծրագրերի գաղափարական առաջադրում և հիմնավորում։ Ցույց է տրվում, որ գրականության գաղափարայնությունը, իրոք, Արփիարյանի համար մնում էր իբրև գեղագիտական լուրջ չափանիշ։

Ակնառու ներգրում պետք է համարել, ըստ իս, լ. Մուրադյանի աշխատության այն հատվածը, որտեղ գիտական հմտալի քննության է ենթարկվում Արփիարյանի կատարած գործը

հայ դրականության պատմության հետազոտության ասպարեզում։ Բացահայտվում է էականը, այն, որ հայ դրականության զարգացման ընթացքը Արփիարյանը դիտարկել է պատմահասարակական շրջափուլերի հերթագայության մեջ առաջնորդվելով պատմահամեմատական մեթոդի սկզբունքներով։ Դրա շնորհիվ Արփիարյանը կառուցել է գրականության պատմության պարբերացման որոշակի համակարգ, որի արդյունավետությունը իր գիտականության և արդիականության մեջ էր։

Լ. Մ. Մուրադյանի աշխատությունը, հիրավի, հանրագումարն է գիտական այն ուսումնասիրությունների, որոնք նվիրվել են արևմտահայ դասականի, գեղագետի և հրապարակագրի կյանքին ու ստեղծագործությանը։ Քննվող հետազոտությունը եր այդ որակը վկայում է նոր և թարմ հարցադրումներով, նյութի գիտական խոր մշակմամբ և Արփիարյան-երևույթի էության մեջ ներթափանցելու նվիրումով։

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր